# Այդ ավանդը չպետք է մոռացվի

**Լեւոն Գրիգորյան**



ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ Ֆադեյ Սարգսյանի ղեկավարությամբ բացվեց ակադեմիկոս Անդրանիկ Իոսիֆյանին նվիրված հուշատախտակը (հեղինակ՝ քանդակագործ Արկադի Բաղդասարյան)՝ փակցված Երեւան քաղաքի Մաշտոցի պողոտայի հ. 50 տան պատին, որտեղ նա ապրել եւ գործել է 1953-1983 թթ., որոշակի ընդմիջումներով: Իոսիֆյանը ԽՍՀՄ գիտության եւ տեխնիկայի տարբեր բնագավառների խոշորագույն դեմքերից մեկն է: Ունենալով մեծագույն ավանդ ԽՍՀՄ տիեզերագնացության զարգացման գործում, նա առաջիններից մեկն էր, որ պարգեւատրվեց հերոսի ոսկե աստղով՝ Գագարինի թռիչքից հետո:

Իոսիֆյանը, ղեկավարելով Մոսկվայում իր ստեղծած էլեկտրատեխնիկայի բնագավառում խոշորագույն ԳՀԻ-ն, միաժամանակ իր բոլոր ուժերը ներդրեց Հայաստանում էլեկտրատեխնիկական արդյունաբերության եւ գիտության զարգացման գործում, նաեւ նրա շնորհիվ մեր հանրապետությունն այդ բնագավառում ԽՍՀՄ-ում գրավեց 3-րդ տեղը (Ռուսաստանից եւ Ուկրաինայից հետո):

Չբավարարվելով դրանով, նրա նախաձեռնությամբ եւ օժանդակությամբ մեզ մոտ ստեղծվեցին մի շարք ճյուղային գիտահետազոտական ինստիտուտներ եւ արդյունաբերական ձեռնարկություններ, հաշվիչ տեխնիկայի, ռադիոէլեկտրոնիկայի, միկրոէլեկտրոնիկայի եւ այլ բնագավառներում:

Ռուսաստանի Դաշնությունն ըստ արժանվույն գնահատելով Ա.Իոսիֆյանի մատուցած ծառայությունները, մահից հետո նրա ղեկավարած ինստիտուտը կոչեց Իոսիֆյանի անունով: Մոսկվայի պոլիտեխնիկական ցուցահանդեսում հատուկ բաժին է կազմակերպվել՝ նվիրված Իոսիֆյանին: Նախատեսվում է նաեւ ինստիտուտին հարող փողոցներից մեկը վերանվանել գիտնականի անունով:

Դժբախտաբար, Հայաստանում պետական մակարդակով ոչ մի քայլ չի արվում Անդրանիկ Ղեւոնդի Իոսիֆյանի հիշատակը հավերժացնելու համար (բացառությամբ նախկին ВНИИКЭ-ն «Անդրոն» ԿԷԳՀԻ՝ վերանվանելուց բացի: Վերջինիս տնօրեն Գ. Դեմիրչյանի նախաձեռնությամբ): Ցավով պետք է նշել, որ ներկա (եւ, առավելապես, գալիք) սերունդը, որոնց բախտ չի վիճակվել հաղորդակցվել նրա հետ, հիմնականում տեղյակ չեն նրա գործերին:

Հաշվի առնելով վերը նշվածը եւ Անդրանիկ Իոսիֆյանի նախկին աշակերտների ու գործընկերների կարծիքը, առաջարկվում է Երեւանում հիմնել Իոսիֆյանի անվան պոլիտեխնիկական (կամ տեխնիկայի պատմության) ցուցահանդես:

Այդպիսի ցուցահանդեսի առկայությունը հնարավորություն կստեղծի մեր պատանիներին եւ երիտասարդությանը ծանոթանալ, հաղորդակցվել միջազգային քաղաքակրթությանը եւ մեր երկրի տեխնիկայի ու գիտության զարգացման պատմությանը, Հայաստանում եւ սփյուռքում ապրող եւ գործող խոշորագույն հայ գիտնականների գործունեությանը: Հատուկ դահլիճ կարելի է հատկացնել ժամանակակից տեխնիկայի եւ նրա հետագա զարգացման խնդիրներին:

Հանրահայտ է, որ նման ցուցահանդեսներ գոյություն ունեն մի շարք զարգացած երկրներում (Անգլիա, Գերմանիա եւ այլն), որոնք առաջին հերթին պատանիների եւ երիտասարդների մեջ հետաքրքրություն եւ սեր են արթնացնում առ տեխնիկան:

Անհրաժեշտ նյութեր եւ ցուցանմուշներ կարելի է հավաքել գիտահետազոտական ինստիտուտներից, արդյունաբերական ձեռնարկություններից, ինչպես նաեւ առանձին անհատներից: